ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.11.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Վ. Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Յուքոմ» ՍՊԸ (ք. Երևան, Տերյան 19, բն. 4)**

2. **«ԱրմենՏել» ՓԲԸ (ք. Երևան, Ահարոնյան 2)**

3. **«Դ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 4/1)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 28.11.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **«Յուքոմ» ՍՊԸ** և **«ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.2 **«Դ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը դատարկ է. ARMEPS համակարգում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«Յուքում» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերը/ կան թերություններ. մասնավորապես՝ հայտի **Հավելվածներ 3.1-ում, 3.3-ում, 3.4-ում** ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **29.11.2016թ.** ժամը 16:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Հարությունյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Ե.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.11.2016թ. ժամը 16^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Վ. Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.

1.1 **«ԱրմենՏել» ՓԲԸ -ն** սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը, նախահաշվային գինը

Չ/Հ	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
			«Յուքոմ» ՍՊԸ	«ԱրմենՏել» ՓԲԸ
1	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
2	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
3	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
4	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
5	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
6	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
7	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	135000	140000
8	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	90000	120000
9	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000	90000	140000
10	**Ինտերնետային կապի ծառայություն**	90000	45000	120000*
11	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000		140000
12	**Ինտերնետային կապի ծառայություն**	270000	135000	190000
13	**Ինտերնետային կապի ծառայություն**	270000	135000	530000*
14	**Ինտերնետային կապի ծառայություն**	270000	135000	480000*

15	**Ինտերնետային կապի ծառայություն**	270000	135000	190000
16	**Ինտերնետային կապի ծառայություն**	180000		140000
17	**Ինտերնետային կապի ծառայություն**	90000	45000	190000*

*** Կազմակերպությունների ներկայացրած գները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1-10, 12-15, 17 չափաբաժինների համար **«Յուքոմ» ՍՊԸ** -ին,

11, 16 չափաբաժինների համար **«ԱրմենՏել» ՓԲԸ-ին:**

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝
1-9, 12, 15 չափաբաժինների համար **«ԱրմենՏել» ՓԲԸ-ին:**

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Հարությունյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Ե.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան